## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2024թ. թիվ 858-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ԹԻՎ 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրենի 04.10.2024թ. թիվ 01/1655 գրությունը՝

Ո ր ո շ ու մ   եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի հունվարի 25-ի «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 13-ի թիվ 13-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 32-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին տողը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) հավելվածը լրացնել նոր տողերով՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ                                        Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 22
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. հոկտեմբերի 22-ի
թիվ 858-Ա որոշման

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Զենք կրելու համար հոգեկան վիճակը հավաստող տեղեկանքի տրամադրում՝ | | |
| 1.1 | Զենք կրելու համար հոգեկան և թմրաբանական վիճակը հավաստող տեղեկանքների տրամադրում՝ անձի կենսամիջավայրում /մեզում/ թմրամիջոցների հայտնաբերման համար նախատեսված արագ թեստավորմամբ /մետամֆետամին, ափիոնի խումբ, տետրահիդրոկանաբինոլներ/: | հատ | 10 000 |
| 1.2 | Արագ թեստավորմամբ մեզում թմրամիջոցների հայտնաբերման դեպքում կենսանմուշը /մեզը/ ՀՀ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ ուղարկելու և թունաքիմիական հետազոտություն իրականացնելու համար: | հատ | 25 000 |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

22/10/2024

X 

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. հոկտեմբերի 22-ի
թիվ 858-Ա որոշման

| | | | |
|---|---|---|---|
| 22 | Քաղաքացու նախաձեռնությամբ անձի կենսամիջավայրում /մեզում/ թմրանյութերի որոշում | | |
| 22.1 | Մետամֆետամինի որոշում | հետազոտություն | 5 000 |
| 22.2 | Ափիոնի խմբի թմրաալկալոիդների որոշում | հետազոտություն | 5 000 |
| 22.3 | Տետրահիդրոկանաբինոլների որոշում | հետազոտություն | 5 000 |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

22/10/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ